



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅ ԵՐԿՍԵՌԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ
ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԷՆ
ՈՂԶՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՂՏԱՏ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ԵՐԿՍԵՌԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ

Աստուծոյ ողորմութեամբ, ի սփիւռս աշխարհի Մեր պանդուխտ զաւակները, բնակութիւն հաստատած հիւրընկալ բարի ափերու վրայ, խաղաղութեան մէջ կ'ապրին ու կը գոյատևեն, կազմակերպուած իբրև կրօնական համայնքներ՝ Հայաստանեայց Մայր եկեղեցւոյ ապահով հովանիին ներքև:

Հայ սփիւրքի տարածքի վրայ, բախտաւոր է մանաւանդ Իրաքի բարեխնամ երկրի մէջ բնակող մեր հաւատացեալ ժողովուրդը, որ կը վայելէ ամէն բարեհաաստ պայմաններ՝ շէն ու պայծառ պահելու իր եկեղեցիները, իր կրթական հաստատութիւնները և մշակութային ազգային կազմակերպութիւնները:

Այս իրողութիւնը Մեզի անսահման ուրախութիւն կը պատճառէ, և Մենք կ'աղօթենք որ Տէրը յաւէտ խաղաղութեան և բարօրութեան մէջ պահպանէ իրաքեան մեծ հայրենիքը և ազնուահոգի արաբ ժողովուրդը:

Մենք երջանիկ ենք այսօր յատկապէս ողջունելու յիսուն տարիներու բեղմնաւոր գործունէութիւնը Պաղտատի Հայ երիտասարդաց միութեան, որ իրաքահայ կեանքի ամենավառ ու ամենակենսունակ արտայայտութիւններէն մին կը հանդիսանայ, իր հոգևոր ու ազգային առողջ ոգիով, իր բազմամեայ մշակութային և ազգային ծաւալուն գործունէութեամբ:

Ջերմօրէն կը շնորհատրենք Հայ երիտասարդաց միութեան յիսնամեայ յոբելեանը, բարձրօրէն կը գնահատենք անոր կէտարեան վաստակը և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնէն կը յղենք Մեր հայրապետական օրհնութիւնը, մաղթելով որ ան շարունակէ իր ազգանուէր գործունէութիւնը այն ոգիով և այն ուխտով, որ Մեծ եղեռնէն փրկուած հերոսական սերունդինը եղան:

Իրաքի հայ երիտասարդութեան ներշնչումի աղբիւր թող հանդիսանան նաև վերածնած մեր մայր հայրենիքը և աստուածակառոյց Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, որոնք կա՛ն ու կը մնա՛ն անասան և յաիտենական, ինչպէս վեհափառ լեռը հայոց՝ Արարատ:

Մենք կը մաղթենք, որ Իրաքի հայ երիտասարդ սերունդները այս տեսիլքով ապրին, աճին ու ծաղկին Աստուծոյ շնորհներով, իբրև հարազատ զաւակները մեր սուրբ եկեղեցիին ու ազգին և իբրև հաւատարիմ քաղաքացիները իրաքեան բարեխնամ երկրին:

Հայրական ողջո՛յն և օրհնութի՛ւն Պաղտատի Հայ երիտասարդաց միութեան ղեկավարներուն և բոլոր անդամներուն, այժմ և յաիտեան. ամէն:

Կալ Օթե

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կոնդակս ի 1-ը յովիսի
1974 փրկչական ամի,
և ի՛ տումարիս հայոց ՌՆԻԳ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 778

